



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ HOUSE OF LEBANON ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի, 26 Մայիսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը House of Lebanon ընկերակցութեան ներկայացուցիչներուն, որոնք եկած էին ցաւակցութիւն յայտնելու Տիրամայր Մարի Մարտիրոսեանի մահուան առիթով: Ներկայացուցիչներն էին ընկերակցութեան վարչական խորհուրդի նախագահ Տոքթ. Հաննա Շամմաս եւ անդամ Ռաշիտ Էլեթել:

Առաջնորդ Սրբազանին կողքին, հանդիպումին ներկայ եղան Ազգ. Վարչութեան անդամներէն Տեարք Կարօ Աւագեան, Կարօ Էշկիեան եւ Լեւոն Կիրակոսեան:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց House of Lebanonի ներկայացուցիչներուն, իրենց ու ընկերակցութեան անդամներուն ազնիւ զգացումներուն համար: Հանդիպումը նաեւ առիթ եղաւ տեսակետներ ու տեղեկութիւններ փոխանակելու Ազգ. Առաջնորդարանի ու հիւրերու ընկերակցութեան աշխատանքներուն, ապա նաեւ Լիբանանն ու լիբանանեան սփիւռքը յուզող հարցերու մասին: Հիւր ներկայացուցիչները նաեւ Առաջնորդ Սրբազանին հրաւեր ուղղեցին ներկայ ըլլալու House of Lebanonի տարեկան ձեռնարկին, որ նախատեսուած է Հոկտեմբերին:

Աւելի քան կէս ժամ տեւած հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներով բարի երթ մաղթեց հիւր ներկայացուցիչներուն:

## PRELATE WELCOMES HOUSE OF LEBANON REPRESENTATIVES

On the evening of Tuesday, May 26<sup>th</sup>, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the House of Lebanon Dr. Hamma Shammas, Chairman of the Board of Directors, and Mr. Rachid Eletel, Chief Financial Officer, who had come to offer their condolences on the passing of Diramayr Marie Mardirossian. The guests also took this opportunity to extend an invitation to the Prelate for their annual banquet which will take place in October.

Joining the Prelate at the visit were Executive Council members Mr. Garo Avakian, Mr. Garo Eshgian, and Mr. Levon Kirakosian.

The visit also offered the opportunity for the Prelate and guests to discuss the recent endeavors of their respective institutions as well as issues concerning Lebanon and the Lebanese Diaspora.